

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴԻԼԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ ԱՆԴՐԱՆԻԿԻ

**ԴՐԱՄԱԿԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ՝
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

**Ը.00.06 - «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՐՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում:

Գիտական դեկան՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդվարդ Մարտինի Սանդոյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝**

տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
Դավիթ Ներսիկի Հախվերդյան

**Առաջատար
կազմակերպություն՝**

Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. հունիսի 21-ին, ժամը 14⁰⁰-ին Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 008 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0051, ք.Երևան, Հովսեփի Էմինի 123:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. մայիսի 21-ին:

**008 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ա.Մ.Սուվարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հեղազորության թեմայի արդիականությունը

Հայաստանի

Հանրապետության տնտեսական քաղաքականության կողմնորոշումը Եվրասիական հարացուցում ունի առանցքային նշանակություն: Եվրասիական տնտեսական միության անդամակցությամբ նոր որակ է հաղորդվում << տնտեսական քաղաքականության ոլորտում իրականացվող տեսական ու կիրառական հետազոտությունների իրականացմանը, մասնավորապես տնտեսական ինտեգրման պայմաններում դրամավարկային քաղաքականության շրջանակներում առկա հիմնախնդիրների վերհանմանն ու դրանց լուծման ուղիների բացահայտմանն ուղղված ջանքերի գործադրմանը՝ հաշվի առնելով տվյալ թեմայի վերաբերյալ համակողմանի գիտական հետազոտությունների պակասը:

Անշուշտ, ԵՏՄ արդի մարտահրավերների հաղթահարման համար պետության դրամավարկային քաղաքականությունը կարևորագույն գործիքներից է՝ արժութային արդյունավետ քաղաքականության կազմակերպման, դրամավարկային քաղաքականության ուժիմի ընտրության, գների կայունության ապահովմանն ուղղված գործիքների արդյունավետության մակարդակի բարձրացման և << ազգային արժույթի դիրքի ամրապնդման առումներով:

Թեմայի արդիականությունը հիմնավորվում է նաև հետևյալ հանգամանքներով.

- Եվրասիական տնտեսական ինտեգրման շրջանակներում դրամավարկային քաղաքականությունների հետագա զուգամիտման անհրաժեշտությամբ պայմանավորված դրանց ներդաշնակեցմանը և համակարգմանն ուղղված վերլուծությունների և գնահատման անհրաժեշտությունը,
- Դրամավարկային քաղաքականությունների միջազգային փորձի համեմատության, լավագույն փորձի ներդրման և ներդաշնակեցման հնարավորությունների ուսումնասիրման անհրաժեշտությունը,
- Տնտեսական ինտեգրման որակական զարգացման և արդի հիմնախնդիրների թիրախավորման ու համակարգման համատեքստում << դրամավարկային քաղաքականության քննական վերլուծության անհրաժեշտությունը,
- Եվրասիական տնտեսական ինտեգրման պայմաններում << դրամավարկային քաղաքականության մարտահրավերների ուղենշման և << դրամավարկային քաղաքականության իրավիճակի համայիր և համակարգված վերլուծությամբ դրանց հաղթահարմանն ուղղված առաջարկությունների ծևավորման անհրաժեշտությունը:

Հեղազորության նպարակը և խնդիրները:

Սույն ատենախոսության հիմնական նպատակը եվրասիական տնտեսական ինտեգրման պայմաններում << դրամավարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղիների ուսումնասիրությունն է՝ հիմնված տեսական և քանակական հետազոտությունների վրա:

Նշված նպատակի իրականացման նկատողումով առաջարկված են հետևյալ հիմնական խնդիրները.

- ուսումնասիրել միջազգային տնտեսական ինտեգրացիայի մակրոտնտեսական ազդեցությունները,
- ուսումնասիրել դրամավարկային քաղաքականությունների համակարգման առկա փորձը ԵՄ օրինակով և դրա կիրարկումը Եվրասիական ինտեգրման շրջանակներում,
- գնահատել ԵՏՄ անդամ երկրների դրամավարկային քաղաքականությունների առանձնահատկությունները և դրանց հնարավոր գույքամիտումը,
- բացահայտել ԵՏՄ անդամ երկրների դրամավարկային քաղաքականությունների համակարգման համար առկա հնարավորություններն ու զարգացման ուղիները,
- բացահայտել ԵՏՄ տարածքում արժութային ինտեգրման ճանապարհին առկա մարտահրավերները և հիմնահարցերը,
- վերլուծել և գնահատել Եվրասիական տնտեսական ինտեգրման շրջանակներում արժութային միության ստեղծման հնարավորությունը,
- ուսումնասիրել ԵՏՄ ընծեռած հնարավորությունները և բացահայտել << դրամավարկային քաղաքականության՝ Եվրասիական տնտեսական ինտեգրումով պայմանավորված մարտահրավերները և լուծման ուղիները,
- բացահայտել << դրամավարկային քաղաքականության այն ազդակները, որոնք նոր հնարավորություններ կստեղծեն ԵՏՄ համատեքստում:

Հերազդության օբյեկտը և առարկան: Սույն հետազոտության օբյեկտը Եվրասիական տնտեսական ինտեգրումն է, իսկ առարկան << դրամավարկային քաղաքականության հիմնախնդիրների, դրանց լուծման մուտքումների ամբողջությունն է, որն ուսումնասիրվում է Եվրասիական տնտեսական ինտեգրման պայմաններում:

Հերազդության մեթոդաբանական և գեղեկարգվական հիմքերը: Աստենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած են տնտեսագիտության մեջ կիրառվող հետազոտական մի շարք մոտեցումներ և մեթոդներ, որոնցից հատկապես կիրառվել են համեմատական մեթոդը, մաթեմատիկական վիճակագրության մեթոդը, համակարգավահուցվածքային մեթոդը, ինչպես նաև ընդհանուր գիտական (այդ թվում՝ ինդուկցիա և դեղուկցիա, վերուծություն և համադրում, ծևականացում, պատմական մեթոդներ և այլն) և էմպիրիկ (դիտարկում, փորձի ընդհանրացում, կանխատեսում) այլ մեթոդներ: Հետազոտության հիմքում դրվել են քննականության, օբյեկտիվության, արդյունավետության, համակողմանիության սկզբունքները:

Հետազոտության գեղեկարգվական հիմք են հանդիսացել ԵՏՄ հիմնադիր պայմանագիրը, Մաքսային միության և Միասնական տարածքի մասին պայմանագրերը, դրանց հետ առնչվող այլ նորմատիվ և օրենսդրական ակտեր, ԵՏՄ անդամ պետությունների միջազգային պայմանագրերը, ԵՏՄ Մաքսային օրենսգիրը, << և ԵՏՄ անդամ այլ պետությունների ազգային

վիճակագրական ծառայությունների տվյալները, ԵՏՄ շրջանակներում կատարված վերլուծական հաշվետվությունները, << և ԵՏՄ անդամ պետությունների օրենսդրությունները, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի վիճակագրական-վերլուծական տարատեսակ տվյալները, Համաշխարհային բանկի (<Բ>) և Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) վիճակագրական տվյալները: Աստեղային տվյալները օգտագործվել են նաև հայտենական և օտարերկրյա հեղինակների տարբեր գիտական հոդվածներ, մենագրություններ և հետազոտական բնույթի այլ աշխատություններ:

Ապենախոսության գիտական նորույթը: Ընտրված հիմնախնդրի արդիականությունը և համընդգրկուն էլեկտրում է Եվրասիական տնտեսական ինտեգրացիայի, և այս համատեքստում << դրամավարկային քաղաքականության հիմնախնդիրների համակարգված ուսումնասիրություն՝ << տնտեսության մարտահրավերների և զարգացման հնարավորությունների համատեքստում:

Պայմանավորված հետազոտություննում առաջարված խնդիրների լուծմամբ՝ գրանցվել են գիտական նորույթ պարունակող հետևյալ արդյունքները.

- Քացահայտվել և գնահատվել են ԵՏՄ անդամ երկրներում դրամավարկային քաղաքականության հայտարարված ռեժիմներից և թիրախներից գրանցած փաստացի շեղումները և դրանց հետևանքները:
- Մշակվել է Եվրասիական տնտեսական միության արժութային ինտեգրման համատեքստում ԵՏՄ անդամ երկրներում իրականացվող դրամավարկային քաղաքականության գուգամիտման աստիճանի գնահատման մեխանիզմ՝ հիմնված դրամավարկային քաղաքականությունը բնորոշող ցուցիչների համակարգի վրա:
- Առաջարկվել է «<< դրամավարկային քաղաքականության մրցունակություն» եզրույթը և այն գնահատվել է Եվրասիական տնտեսական ինտեգրման համատեքստում:
- Հիմնվելով Եվրոպական արժութային միավորի (ECU) փորձի վրա՝ կառուցվել է «Եվրասիական արժութային միավորի» մոդել, որը արտացոլում է ԵՏՄ անդամ երկրների ազգային արժույթների տեսակարար կշիռը միանական արժութային զամբյուղում:

Ապենախոսության գիտական և կիրառական նշանակությունը: Սույն ատենախոսության գիտական նշանակությունը կայանում է նրանում, որ աշխատանքի շրջանակներում առաջ են քաշվել մի շարք նոր հարցադրումներ, որոնք վերաբերում են Եվրասիական տնտեսական ինտեգրման պայմաններում << դրամավարկային քաղաքականության առանձին ասպեկտներին:

Աստեղային տվյալներու կատարված կարող է օգտակար լինել դրամավարկային քաղաքականության և տնտեսական ինտեգրման հիմնահարցերով գրաղվող փորձագետների և հետազոտողների համար, ինչպես նաև << տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման գործում լրացնելու ոլորտի գիտելիքային ռեսուրսները:

ԵՏՄ ինտեգրման համատեքստում << դրամավարկային քաղաքականության հիմնախնդիրների շուրջ կատարված վերլուծություններն ու ատենախոսության առանձին մասեր կարող են օգտագործվել «Միջազգային տնտեսագիտություն», «Ֆինանսներ և փարկ» մասնագիտությունների դասավանդման ընթացքում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Հետազոտության հիմնական արդյունքները և սկզբունքները ըննարկվել են Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում: Հետազոտության արդյունքները ընդունվել և կիրառվել են Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի որոշ ուսումնական առարկաների դասավանդման ընթացքում ներառվելով այդ առարկաների ուսումնական ծրագրերի մեջ: Մասնավորապես, ատենախոսության որոշ տարրեր տեղ են գտել Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի «Տնտեսագիտության և բիզնեսի» ինստիտուտի «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտության շրջանակներում դասավանդվող «Մակրոտնտեսագիտություն», «Համաշխարհային տնտեսություն» և միջազգային տնտեսական հարաբերություններ» դասընթացների ուսումնական ծրագրերում:

Ատենախոսության արդյունքները և ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հինգ գիտական հոդվածներում:

Արենախոսության կառուցվածքը և ժապար:

Արենախոսության բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից ու 4 հավելվածից: Այն (առանց հավելվածների) շարադրված է 120 մեքենագիր էջի վրա և պարունակում է 29 գծապատճեր և 15 աղյուսակ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, աշխատանքի տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը, աշխատանքում ստացված հիմնական արդյունքները քննարկումները և հրապարակումները, աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը, կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «**Տնտեսական ինտեգրում և դրամավարկային քաղաքականությունը» գիտում անդրադարձ է կատարվել դրամավարկային քաղաքականության առանձնահատկություններին տնտեսական ինտեգրման պայմաններում:**


Ցուկայական տնտեսություններում պետության վարած տնտեսական քաղաքականությունը առանցքային դեր ունի, և շատ դեպքերում պետական հիմնարար որոշումների համար այն ծառայում է որպես անկյունաքարտ: Որպես տնտեսական քաղաքականության քաղկացողիչ մաս՝ դրամավարկային քաղաքականության նշանակությունը նոր հնչեղությամբ հանրային օրակարգ վերադարձավ 2008-2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում, երբ քազմաթիվ ավանդական մոդելների և գործիքների արդյունավետությունը դրվեցին հարցականի տակ: Այս համատեքստում տեսարանները փորձում են նորովի դիտարկել տնտեսական ինտեգրման էությունը, ինչպես նաև պետության կողմից վարկող դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը ինտեգրման պայմաններում:

Եվրոպական միության պատմությունը և գրանցած հաջողություններն ապացուցեցին տնտեսական ինտեգրացիայի կարևոր դերը պետությունների սոցիալ-տնտեսական առաջնաթագի ապահովման գործում: Ինտեգրացիոն գործընթացներն աշխարհում սրընթաց վերելք ապրեցին հատկապես 1990-ականներից, և արդեն 2015 թ. ավարտին աշխարհում հաշվվում են շուրջ 267 գործող տարածաշրջանային առևտրային համագործակցության ծներ (գծապատճեր 1): Պետությունների կողմից ինտեգրացիոն նախագծերը դիտվում են որպես պետության տնտեսական աճի, անվտանգության ապահովման, ազգային շահի իրացման և կայուն զարգացման ապահովման գրավական: Տնտեսական ինտեգրումը ենթադրում է ոչ միայն շուկայական առևտրի ծավալների աճ և ֆինանսական հոսքեր, այլև ինստիտուցիոնալ ներդաշնակեցում՝ դրամավարկային, հարկաբյուջետային, առևտրային քաղաքականությունների, դրանց վերաբերող օրենսդրությունների և մեխանիզմների առումներով, ինչը ի վերջո հանգեցնում է տնտեսությունների ամրությական ինտեգրացիային:¹

Տնտեսական ինտեգրման էությունը և առանձնահատկությունները բացահայտելու համար այն անհրաժեշտ է դիտարկել շարժնաթագի մեջ:

¹ Sachs, J. & Warner, A., Economic reform and the process of global integration, Brookings papers on economic activity, vol. no.1, pp. 1-118, 1995, p. 105

Ուսումնասիրելով տնտեսական ինտեգրման վերաբերյալ ավանդական և նոր ռեգիոնալիզմի մոտեցումները՝ հեղինակը եզրակացնում է, որ այժմ նախընտրությունը տրվում է ինտեգրման խառնածին (իհրիդ) մոդելներին, որոնք ինտեգրվող երկրներին թույլ են տալիս շրջանցելու ավանդական մոտեցման համար անհրաժեշտ պահանջներն ու սկզբունքները (երկրների տնտեսության զարգացվածության նմանությունը, երկրների մեծությունը, ընդհանուր սահմանի առկայությունը, որոշումների ընդունման պատվիրակումը վերպետական մակարդակ և այլն):




Գծապատկեր 1. Տարածաշրջանային առևտրային համաձայնագրերի էվոլյուցիան²

Տնտեսական ինտեգրման պայմաններում դրամավարկային քաղաքականության ռեժիմի ընտրության հարցում հեղինակը ուսումնասիրել է դրամավարկային քաղաքականության արտաքին և ներքին կայունության գերակայությունները: Այս համատեքստում, մասնավորապես, դիտարկելով Մանեկել-Ֆեմինզի անհնարին երրորդության (impossible trinity) մոդելը՝ ընդգծվել է փոխարժեքի քաղաքականությունների երկու մաքուր բնեօնների՝ ազատ լողացող (free floating) և ֆիքսված խարսխման (fixed peg) քաղաքականությունների ընտրության անհրաժեշտությունը՝ պայմանավորված ֆինանսական շուկաների ինտեգրացիայի խորացման արդյունքում կապիտալի շարժունակության մեծացմամբ:

Ազատ լողացող փոխարժեքի քաղաքականության կիրառումը պայմանավորված է մի շարք հիմնահարցերով, ինչպիսիք են՝ դրամավարկային իշխանությունների կողմից անհրաժեշտ հնտությունների և գործիքակազմի պակաս, արժույթի նկատմամբ վստահության ցածր մակարդակ (ինչը դուստրվում է դոլարայնացման բարձր մակարդակով և վերաֆինանսավորման բարձր տոկոսադրույթով), գնաճային սպասումներ, հավելյալ գործարքային ծախսեր և փոխարժեքային ռիսկեր:

² Աղբյուր՝ Առևտրի համաշխարհային կազմակերպություն. World Trade Organization, Regional Trade Agreements: Facts and Figures:

<https://www.wto.org/english/tratop_e/region_e/regfac_e.htm>



Գծապատկեր 2. Դրամավարկային նպատկաների «անհնարին երրորդությունը»³

Աշխատանքում անդրադարձ է կատարվել նաև փոխարժեքի խարսխման քաղաքանության ընտրության հիմնահարցին՝ դիտարկելով տնտեսական ինտեգրման շրջանակներում արժութային ինտեգրման հիմնախնդիրները: Հեղինակը եզրակացրել է, որ այս պարագայում ինտեգրվող երկրները խուսափում են մի շարք խնդիրներից (արժույթի հանդեպ անվտանգություն, գործարքային ծախսեր, փոխարժեքային ռիսկ, ԿԲ-ի քաղաքականության ռիսկեր, թափանցիկության պակաս և այլն): Սակայն, մյուս կողմից՝ այս քաղաքականության ընտրությունը տնտեսական ինտեգրման շրջանակներում հանգեցնում է մի քանի առանցքային հիմնահարցերի առաջացմանը՝ մի կողմից՝ դրամավարկային քաղաքականության կարևոր գործիքներից մեկի՝ փոխարժեքի քաղաքականության գործիքից հրաժարումն է, մյուս կողմից՝ նպատակահարմար խարսխի (արժույթի) ընտրության անհրաժեշտությունը:

Դրամավարկային քաղաքականության ազդեցությունը հեղինակը դիտարկել է նաև փոխարժեքի՝ առևտրային հարաբերությունների վրա ունեցած ազդեցության տեսանկյունից: Այսպես, ազգային արժույթի արժմուրման դեպքում պակասում է տեղական արտադրանքի արտահանման մրցունակությունը՝ կապված ինքնարժեքի ավելացման հետ, իսկ արժեգույնը առաջ է բերում գնաճային երևույթներ և արտաքին պարտքի մեծացում՝ արտարժությի փոխարժեքի արժմուրման հետևանքով:

³ Frankel, J.A., No Single Currency Regime is Right for All Countries or at All Times, NBER Working Paper, No. 7338, 1999, p. 7

Եվրոպական միության դրամավարկային քաղաքականությունների համակարգման ուսումնասիրությունը ինստիտուցիոնալ և կառուցվածքային առումներով կարևոր նշանակություն ունի Եվրասիական տնտեսական ինտեգրման համար: Դիտարկելով ԵՄ փորձը դրամավարկային քաղաքականության համակարգման համատեքստում՝ հեղինակը անդրադարձել է Եվրոպական Տնտեսական և արժութային միությանը (ՏԱՄ): Մասնավորապես, հետազոտվել է այս տարածաշրջանում դրամավարկային քաղաքականության համակարգման փորձը և առանձնահատկությունները: Հեղինակը կարևոր հետևողություններ է արել կառուցիչ լավագույն փորձի կիրառման և գրանցած անհաջողությունները չկրկնելու առումով: Ուսումնասիրելով «Կայունության և աճի պայմանագրի» մեխանիզմները, ինչպես նաև Եվրահանձնաժողովի ռազմավարական գերակայությունները՝ ընդգծվել է ՏԱՄ-ի շրջանակներում դրամավարկային քաղաքականությունների ներդաշնակեցմանը զուգահեռ հարկաբյուջետային քաղաքականության համակարգման կարևորությունը:

Այժմնախոսության երկրորդ՝ «Դրամավարկային քաղաքականության համակարգման հիմնախնդիրները Եվրասիական գննորեսական ինտեգրման շրջանակներում» գլխում ներկայացվել է ԵՏՄ անդամ երկրների դրամավարկային քաղաքականությունների համեմատական վերլուծությունը, գնահատվել է դրանց զուգամիտման հնարավորությունը, ինչպես նաև դիտարկվել է ԵՏՄ շրջանակներում արժութային ինտեգրման հիմնահարցը:

Առանձին անդրադարձ է կատարվել, մասնավորապես, ԵՏՄ անդամ երկրների դրամավարկային քաղաքականության ռեժիմներին և փոխարժեքային քաղաքականություններին: Այսպես, դրամավարկային քաղաքականության տարրեր նպատակների (գների կայունություն, ազգային արժույթի հուսալիություն, ընթացիկ հաշվի հաշվեկշռվածություն) ուսումնասիրությամբ գնահատվել են ԵՏՄ անդամ երկրներում դրամավարկային քաղաքականության ընտրված հոչակած ռեժիմներից արձանագրած փաստացի շեղումները: Այդ համատեքստում հեղինակը, որպես ժամանակագրական հիմք, ընտրել է երեք խոշոր մակրոտնտեսական շոկերի ժամանակահատվածներ՝ 1998-99 թթ. Ռուսաստանի Դաշնության տնտեսության ճգնաժամը, 2008-2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, ինչպես նաև 2014 թ. Նավթի համաշխարհային գների անկմամբ և ՌԴ հանդեպ կիրառվող տնտեսական պատժամիջոցներով պայմանավորված արտաքին տնտեսական շոկը:


Վերլուծության արդյունքում հեղինակը եզրակացրել է, որ նշված ժամանակահատվածներում ԵՏՄ անդամ երկրներից միայն ճկուն փոխարժեքային քաղաքականություն վարող երկրներին է հաջողվել ճնշել գնաճը: Գնաճի թիրախավորման քաղաքականությունն ընտրած պետությունները (Ղրղզստան, Հայաստան) ԵՏՄ այլ երկրների համեմատությամբ, ավելի արդյունավետ են եղել գնաճի զսպման հարցում: Սա հատկապես տեսանելի է <<օրինակով»:

Սահող խարսխի (crawling peg) փոխարժեքի քաղաքականության դեպքում (ռուսական ոռութի, տեսնգե) արժեգրկումները կտրուկ են տեղի ունեցել, ինչը բացասաբար է ազդել գնաճի տեմպերի վրա: Ինչ վերաբերում է ֆիքսված

խարսխին (թելառուական ռուբի), ապա այն գների կայունության առումով վատագոյն ցուցանիշներն է գրանցել (գծապատկեր 4):

Դիտարկելով ազգային արժույթի հանդեպ վստահությունը՝ շեշտվել է ԵՏՄ անդամ երկրների տնտեսությունների դոլարայնացման հիմնահարցը: Բացի այդ, նշված ժամանակահատվածում հեղինակը ԵՏՄ բոլոր երկրներում արձանագրել է կապիտալի և ընթացիկ հաշվի հետ գործարքներում ֆորմալ սահմանափակումների ընդարձակ կիրառում, ինչպես նաև ֆինանսական իրական բացության պակաս:

Անդրադառնալով փոխարժեքի հոչակած քաղաքականություններին՝ ատենախոսն ուսումնասիրել է մասնավորապես փոխարժեքի տատանումները և ազգային կենտրոնական բանկերի իրականացված միջամտությունները՝ դիտարկելով արտաքին պետական պահուստների շարժնթացը և տատանումների ինտենսիվությունը (գծապատկեր 3):




Գծապատկեր 3. ՀՀ դրամի ամսական անվանական փոխարժեքը ԱՄՆ դոլարի և ՀՓԲ (SDR) նկատմամբ և արտաքին համախառն պահուստների ամսական շարժնթացը 01.2004-01.2016 (յուր. ամսվա վերջին տվյալները)⁴

Վերջինի գնահատման արդյունքում հեղինակը արձանագրել է արտաքին պետական պահուստների մակարդակի զգայի տատանումներ ԵՏՄ անդամ բոլոր երկրներում, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ դրամավարկային մարմինները, չնայած հոչակած քաղաքականություններին, գերծ չեն մնացել արժութային միջամտություններից:

Համեմատաբար ավելի ճկուն փոխարժեքային քաղաքականություն վարող Հայաստանի և Ղրղզստանի կենտրոնական բանկերը նույնականացրել են դիտարկված ամիսները մի քանի լայնածավալ արժութային միջամտությունների են դիմել, ինչը թույլ է տվել ԵՏՄ ազգային արժույթների արժեգործկան պայմաններում, մեղմել արժեգործկան սոցիալ-տնտեսական հետևանքները:

⁴ Գծապատկերը կազմվել է ՀԲ վիճակագրական տվյալների հիման վրա. (The World Bank, World DataBank/ World Development Indicators: <http://databank.worldbank.org/data/reports.aspx>)



Գծապատկեր 4. Բելառուսական ոուբլու և դազախական տենգեի ամսական անվանական փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ և արտաքին համախառն պահուատների ամսական շարժմթացը 01.2004-01.2016 (յուր. ամսվա վերջին տվյալները)⁵

Ուստամասիրության արդյունքում ընդգծվել է, որ չնայած հոչակած քաղաքականություններին՝ բոլոր երկրներում էլ գործում են դրամավարկային ոչ մաքուր կարգավորվող ռեժիմներ: Հեղինակը եզրակացրել է, որ փոխարժեքային ֆորմալ ռեժիմների համեմատությունը դիտարկված արդյունքների հետ ցույց է տալիս, որ փոխարժեքներն իրականում պարբերաբար կարգավորվել են ԵՏՄ անդամ բոլոր երկրներում՝ դրամավարկային տարբեր գործիքների կիրառմամբ: Հեղինակը եզրակացրել է նաև, որ Եվրախական տնտեսական միությունում ընդհանուր միտումը՝ առավել ճկուն ռեժիմներին աստիճանական անցումն է: Այս առումով՝ տնտեսական ինտեգրման շրջանակներում «անհնարին երրորդության» դիտարկմամբ՝ կարելի է նախանշել դեպի ազատ լրացող փոխարժեքի քաղաքականության ձգուումը:


Սակայն այս համատեքստուու հեղինակի կողմից առանձնացվել են մի շարք հիմնահարցեր՝ տնտեսությունների դոլարայնացման բարձր մակարդակ, ազգային արժույթների արժեզրկման արդյունքում՝ փոխարժեքի ազդեցությունը գների վրա և այլն: ԵՏՄ անդամ երկրների դրամավարկային քաղաքականությունների արդյունավետության վրա ազդող այլ գործոնների թվում առանձնացվել են

⁵ Գծապատկերները կազմվել են <Բ վիճակագրական տվյալների հիման վրա. (The World Bank, World DataBank/ World Development Indicators:
<http://databank.worldbank.org/data/reports.aspx>)

հարաբերականորեն սահմանափակ ֆինանսական բացույթան աստիճանը, ազգային արժույթների կայունությունը, թույլ ֆինանսական շուկաները և այլն:

Դրամավարկային քաղաքականությունների նշանակած հիմնախնդիրները անբարենպաստ պայմաններ են ստեղծում կապիտալի ներհոսքի և ֆինանսական ինտեգրման տեսանկյունից: Այս համատեքստում հետազոտության մեջ դիտարկվում է նաև փոխարժեքային քաղաքականության մյուս թևերի՝ փոխարժեքի խարսխման կիրառումը, որի դեպքում լուծարվում են լողացող փոխարժեքի քաղաքականության իրականացմանը խոչընդոտող հանգամանքները: Ենելով հետազոտության նպատակներից, ինչպես նաև ԵՏՄ ընթացիկ ռազմավարության միտումներից՝ հեղինակը գնահատել է ԵՏՄ տարածքում արժութային միության հնարավորությունը և այդ ճանապարհին առկա խոչընդոտները: Դիտարկվել է նաև արժութային ինտեգրացիայի փուլային տարերակը՝ Եվրամիության օրինակով:

ԵՏՄ շրջանակներում արժութային ինտեգրման հնարավորությունը բացահայտելու նպատակով հեղինակի կողմից մշակվել է դրամավարկային քաղաքականության գուգամիտման (կոնվերգենցիա) աստիճանը գնահատող մեխանիզմ:



Գծապատկեր 5. ԵՏՄ անդամ երկրների միջև դրամավարկային ցուցիչների կոնվերգենցիայի և դրամավարկային իրական կոնվերգենցիայի աստիճանը 2008-2015 թթ.⁶

Այս համատեքստում առանձնացվել է երկու ցուցիչ, որոնցից առաջինը վերաբերում է դրամավարկային քաղաքականության ցուցիչների գուգամիտմանը, իսկ երկրորդը՝ դրամավարկային քաղաքականության իրական գուգամիտման աստիճանին (գծապատկեր 5): Վերջինը, բացի դրամավարկային քաղաքականության գործիքների և նպատակների ցուցիչներից (վերաֆինանսավորման տոկոսադրույթ, սպառողական գների մակարդակ),

⁶ Գծապատկերը կազմված է հեղինակի կողմից՝ օգտագործելով ՀԲ, ԱՄՀ, ԵՏՄ անդամ երկրների ազգային վիճակագրական ծառայությունների տվյալները: Վերընթաց կորը ցույց է տալիս ցուցիչների դիվերգենցիա, իսկ վարընթացը կորը՝ գուգամիտում:

ընդգրկում է դրամավարկային քաղաքականության արդյունավետության վրա ազդող մակրոտնտեսական մի շարք այլ ցուցանիշներ ևս, ինչպես օրինակ՝ վճարային հաշվեկշիռը, պետական պահուստների մակարդակը, տնտեսության փողայնացման աստիճանը:

Դիտարկելով դրամավարկային քաղաքականությունների գուգամիտման աստիճանը ԵՏՄ օրինակով՝ հեղինակը եզրակացրել է, որ առաջմ այս ցուցիչի ցածր մակարդակը թույլ չի տալիս քննարկել միասնական արժույթի ներդրման հեռանկարը: Հաշվի առնելով արժութային ինտեգրման Եվրոպական փորձը և ԵՏՄ առանձնահատկությունները՝ հեղինակի կողմից առաջարկվել է արժութային ինտեգրման հետևյալ հաջորդականությունը.


Առաջին փուլում ԵՏՄ անդամ երկրները պետք է շեշտը դնեն առկա ինստիտուտների գործիքների ամրապնդման, պայմանագրերի և նախատեսված ծրագրերի կյանքի կրչման վրա: Մասնավորապես ընդգծվում է, որ արժույթային ինտեգրման շրջանակներում անհրաժեշտ է աշխատանքներ տանել ԵՏՄ պայմանագրի Հոդված 64-ի՝ փոխադարձ առևտորում ազգային արժույթների կիրառման սկզբունքի իրագործման ուղղությամբ: Հեղինակը եզրակացնում է, որ այս քայլով հնարավոր կյինի որոշակիորեն լուծել մի շարք հիմնախնդիրներ՝ կապված ազգային արժույթի հանդեպ վստահության մակարդակի բարձրացման, ինչպես նաև, որպես այդ գործընթացի հետևանք՝ դոլարայնացման մակարդակի անկման հետ:

Երրորդ փուլում, միասնական ֆինանսական կարգավորիչ մարմնի ստեղծմանը գուգահետո, հեղինակը առաջարկել է միասնական վճարային միավորի անցման կազմակերպումը, որը կօգտագործվի անկանխիկ գործարքներում: «Եվրասիական արժութային միավոր» (ԵԱԱՄ) կներկայացվի Եվրասիական փոխարժեքի միասնական մեխանիզմի ներքո: Այն կարող է ստեղծվել որպես արժութային զամբյուլ՝ էքյուի նմանությամբ:

Երրորդ փուլում առաջարկվել է դրամավարկային հարաբերությունների միասնականացումը գուգակցել ֆինանսական, հարկաբուժետային և առևտորային քաղաքականությունների համակարգման հետ: Արդյունքում այն կհանգեցնի մակրոտնտեսական ամբողջական և համընթաց գուգամիտման, ինչը հիմքեր կստեղծի միասնական արժույթի անցման համար:

Առենախոսության երրորդ՝ «ՀՀ դրամավարկային քաղաքականության հիմնահարցերը Եվրասիական բնորոշության ինդեքրման համարեքսպում» գլխում դիտարկվել են ՀՀ կողմից վարվող դրամավարկային քաղաքականության մրցունակության բարձրացման արդի հիմնահարցերը Եվրասիական ինտեգրման պայմաններում, ինչպես նաև, որպես ԵՏՄ շրջանակներում դրամավարկային քաղաքականությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլ դիտարկվել է միասնական հաշվարկային մողեկի կիրառումը ԵՏՄ տարածքում: Այս համատեքսությամբ հեղինակը, հաշվի առնելով էքյուի փորձը և Եվրոպական փոխարժեքի մեխանիզմը (ERM), ԵՏՄ համար կառուցել է միասնական հաշվարկային միավորի՝ Եվրասիական արժութային միավորի (ԵԱԱՄ) մոդելը:

Ուսումնասիրելու համար եվրափական տնտեսական ինտեգրման պայմաններում Հայաստանի Հանրապետության դրամավարկային քաղաքականության մրցունակությունը՝ ատենախոսը վերլուծել է ԿԲ դրամավարկային տարատեսակ գործիքների արդյունավետությունը և ազդեցությունը տնտեսական ինտեգրման արդյունքում ընձեռնված հնարավորությունների իրացման իմաստով:



Գծատկեր 6. ԵՏՄ անդամ երկրներում սպառողական գների ինդեքսի միջին տարեկան աճը նախորդ տարվա համեմատ և կուտակյին աճը 2009-2015 թթ.⁷


Այս համատեքստում, մասնավորապես, ուսումնասիրվել են գնաճի թիրախավորման, փոխարժեքի և արտաքին պահուստների վարման, վերաֆինանսավորման տոկոսադրույթի քաղաքականությունները: Հետազոտությունում ուսումնասիրվել են դրամավարկային քաղաքականության արդյունավետության վրա ազդող այլ գործոններ ևս՝ տնտեսության փողայնացման մակարդակ, դրաբանացման մակարդակ, ՀՀ դրամի կայունություն և այլն:

Վերլուծության արդյունքում հեղինակը եզրակացրել է, որ ուժեղ դրամի քաղաքականությունը, չնայած գնաճի ցածր մակարդակին, իր բացասական ազդեցությունն է ունեցել արտաքին առևտուրի մրցունակության, արտաքին պահուստների կրճատման, ինչպես նաև ներդրումային միջավայրի վրա (գծապատկերներ 6, 7): Այս առումով ավելի օրակարգային է դառնում ԵՏՄ շրջանակներում արտաքին մակրոտնտեսական շուկայի մեղմման նպատակով դրամավարկային իշխանությունների փոխհամաձայնեցված գործունեությունը և քաղաքականությունների համակարգումը:

ԵՏՄ դրամավարկային քաղաքականությունների համակարգման համատեքստում հեղինակը շեշտում է ազգային արժույթների միջև փոխադարձ փոխարկելիության ազատականացման սկզբունքի կյանքի կոչման

⁷ Գծապատկերը կազմվել է ԱՄՀ վիճակագրական տվյալների հիման վրա (International Monetary Fund, IMF eLibrary data, International Financial Statistics: <<http://data.imf.org/>>)

անհրաժեշտությունը: Այս սկզբունքն արտացոլված է նաև ԵՏՄ պայմանագրային բազայով⁸:



Գծապատկեր 7. Սպառողական գների աճը Հայաստանի Հանրապետությունում և արտաքին պետական պահուատների շարժընթացը 2005-2015 թթ.⁹

Որպես ԵՏՄ անդամ Երկրների դրամավարկային քաղաքականությունների համակարգման հերթական փուլ՝ հեղինակը միջնաժամկետ հեռանկարում դիտարկել է ԵՏՄ շրջանակներում միասնական արժութային զամբյուղ՝ տարածաշրջանային հաշվարկային միավորի ընդունումը: Աստեղախոսը մասնավորապես կառուցել է՝ «Եվրասիական արժութային միավորի» (ԵԱԱՄ) մոդել՝ միջավայրական և մասնավոր ոլորտներում անկանխիկ կիրառության համար: Որպես մոդելի հիմք կիրառվել է Եվրոպական փոխարժեքի մեխանիզմի շրջանակներում էլյուի մոդելը:

Ազգային արժույթների փոխարժեքների հաշվարկներում հեղինակի կողմից կիրառվել է մինչև 1999 թ. կիրառվող էլյուի հաշվարկման բանաձևը¹⁰.

$$S_i = EAUU(0) \times (W_i) \times FX_i(0))$$

Որտեղ՝

S_i – i արժույթի արժեքն է ԵԱԱՄ-ում,

W_i – i արժույթի կշիռն է՝ պայմանավորված մակրոտնտեսական գործոններով,

$FX_i(0)$ – ազգային արժույթի փոխարժեքն է արտարժույթի հանդեպ,

$EAUU(0)$ – <ՓԻ/ԵԱԱՄ փոխարժեքն է արժութային միավորին անցման ժամանակ,

⁸ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիր, Հավելված 15. Արձանագրություն համաձայնեցված արժութային քաղաքականության իրականացմանն ուղղված միջոցների մասին.

⁹ Գծապատկերը կազմվել է ՀԲ վիճակագրական տվյալների հիման վրա (The World Bank, World DataBank/ World Development Indicators: <http://databank.worldbank.org/data/reports.aspx>)

¹⁰ Edison H.J., Is the ECU an optimal currency basket? International Finance Discussion Papers, Number 282, 1986, p. 5

Այսպիսով, ԵԱԱՄ-ի՝ ՀՓԻ-ով արտահայտված արժեքը տրված *t* ժամանակահատվածում, ըստ էռթյան, մասնակից արժույթների արժեքների գումարն է, որոնք փոխակերպվում են ՀՓԻ-ի՝

$$\text{ԵԱԱՄ}(t) = \Sigma S_i \times \frac{1}{FX_i}$$

Մոդելի կառուցման համար առաջին քայլով անհրաժեշտ է որոշել յուրաքանչյուր արժույթի կշիռ՝ զամբյուղում: Այնուհետև այս կշիռները անհրաժեշտ է վերածվն իրական քանակական թվերի՝ օգտագործելով ընթացիկ փոխարժեքը ՀՓԻ-ի նկատմամբ:

Աղյուսակ 1
ԵՏՄ ազգային արժույթների կշիռները (W) և արժեքները (S) ԵԱԱՄ զամբյուղում¹¹

	Արժույթի համախառն կշիռ զամբյուղում (%)	Արժույթի փոխարժեքը ՀՓԻ-ի նկատմամբ	Զամբյուղի կշիռ արտահայտված ՀՓԻ-ով	Ազգային արժույթների փոխարժեքները ԵԱԱՄ-ի նկատմամբ
Բնել. ռուբի	4.89239	25731.620	0.00019	30248.33
Տենգե	11.15724	471.162	0.02368	553.87
Սոմ	0.36707	105.176	0.00349	123.64
Դրամ	0.50715	678.693	0.00075	797.82
Ռուս. ռուբի	83.07616	100.996	0.82257	118.72
ՀՓԻ փոխարժեքը ԵԱԱՄ-ի նկատմամբ	-	-	0.85068	-

Ազգային արժույթների տեսակարար կշիռները պետք է արտացոլեն երկորի տնտեսական նշանակությունը միության մեջ: Պարզելու համար արժութային զամբյուղում ԵՏՄ արժույթների տեսակարար կշիռը հեղինակը որպես հաշվարկման հիմք ընդունել է ԵՏՄ ՀՆԱ-ում և արտահանման մեջ անդամ երկրների տեսակարար կշիռ համախառն ցուցիչը (աղյուսակ 1): Ազգային արժույթների՝ Եվրասիական արժութային միավորի հանդեպ փոխարժեքների հաշվարկի համար կիրառվել է Հատուկ փոխառության իրավունքը (SDR)¹² որպես համեմատաբար կայուն հաշվարկային միավոր:

Անհրաժեշտ է որոշել նաև արժութային զամբյուղում ազգային արժույթների տատանումների սահմանները: Այդ նպատակով հեղինակը հաշվարկել է 2011 թ. օգոստոսից 2014 թ. օգոստոս ընկած ժամանակահատվածում փոխարժեքների միջին ամսական տատանումները՝ ՀՓԻ-ի և ԱԱՄ դոլարի նկատմամբ և առաջարկել է ազգային արժույթների փոխարժեքների հետևյալ սահմանների կիրառումը՝ ՀՀ դրամի և Ղրղզստանի սոմի համար $\pm 10\%$, դաշտական տեսզերի, բելառուսական ռուբլու և ռուսական ռուբլու համար $\pm 15\%$ ինտերվալները:

¹¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմնվելով ԵՏՄ ՀՆԱ-ում և արտահանման մեջ անդամ երկրների տեսակարար կշիռը:

Աստենախոսն ընդգծում է, որ փոխադարձ տատանումների զարումը նախանշված սահմաններում կպահանջի ազգային դրամավարկային իշխանությունների ակտիվ շուկայական միջամտություններ՝ միջազգային պահուստների կիրառմամբ: Այս առումով հրամայական է ԵՏՄ երկներում 2014 թ. զգալի կրճատումից հետո համալրել արտաքին պահուստների մակարդակը:

2016 թ. հունվարի 1-ի դրույթամբ ԵԱԱՍ-ի փոխարժեքի՝ ազգային արժույթների նկատմամբ հաշվարկների արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում: Հեղինակը ենթադրում է, որ Եվրասիական արժութային միավորը կարող է շրջանառվել քրյոփ նմանությամբ՝ պաշտոնական և մասնավոր անկանխիկ գործարքներում կիրառվելով որպես հաշվարկային միավոր: Հաշվարկային միասնական միավորի ներդրումից առաջ սակայն աշխատանքում կարևորվել է մի խումբ հիմնարար բարեփոխումների իրականացումը: Այսպես, անհրաժեշտ է բարձրացնել ազգային արժույթների կշիռը և վստահությունը դրանց հանդեպ՝ մեծացնելով դրանց կիրառումը փոխադարձ հաշվարկներում, միջնաժամկետ հատվածում ամբողջությամբ հրաժարվելով արտարժույթով գործարքներից և անցում կատարելով ազգային արժույթների: Այդ նպատակով դեռևս պետք է ապահովի արժութային քաղաքականությունների կարգավորման և վերահսկման մարմինների համագործակցությունը, ԵՏՄ պայմանագրային բազայի ամրապնդումը և ընդլայնումը, արժութային քաղաքականությանը վերաբերող օրենսդրությունների ներդաշնակեցումը:

Աստենախոսության «Եզրակացություններ» բաժնում ամփոփվել են հետազոտության շրջանակներում իրականացված վերլուծությունների հիմնական եզրահանգրումները և արդյունքները, ներկայացվել մի շարք առաջարկություններ, որոնք ամփոփ ներկայացված են ստորև.

✓ Համաշխարհային գարգացումների արդի փոլում տնտեսական գործոնները առանցքային դեր են խաղում պետությունների կողմից ազգային շահի իրականացման համար, որով պայմանավորված ինտեգրումը համաշխարհային տնտեսական հարաբերություններում ավելի է խորանում: Եվրասիական տարածաշրջանը՝ որպես մակրոաշխարհի մի բաղադրիչ, այսօր հայտ է ներկայացնում դառնալու համաշխարհային տնտեսության առանձին բևեռ: Եվրասիական տնտեսական ինտեգրումը տարածաշրջանային ինտեգրացիոն օրիենտիվ տնտեսական, քաղաքակրթական և պատմական քաղաքական հանգամանքներով իրենից ներկայացնում է բնական գործընթաց: Այս գործընթացը նպատակ ունի մի կողմից՝ տարածաշրջանային ինտեգրման մակարդակում ռեսուլտների արդյունավետ տեղաբաշխման, երկրների մրցակցային առավելությունների բյուջեացման, տարածաշրջաններում համաշխարհային հաստատման, մյուս կողմից՝ համաշխարհային մակարդակում տարբեր տարածաշրջանների հետ Եվրասիական տարածաշրջանի մրցակցության աճի: Հայաստանի Հանրապետությունը այս գործընթացի մաս է կազմում և պետք է օգտագործի ինտեգրման հնարավորությունները՝ ակտիվ դեր ստանձնելով այս գործընթացում՝ իրացնելով ընձեռնված հնարավորությունները և տնտեսական զարգացման ներուժը:

✓ Ուսումնասիրելով միջազգային տնտեսական ինտեգրման մակրոտնտեսական ազդեցությունները, ինչպես նաև դրամավարկային քաղաքականության համակարգման առկա փորձը՝ կարելի է եզրակացնել, որ տնտեսական քաղաքականության՝ մասնավորապես դրամավարկային գործիքների ճիշտ, արդյունավետ, թիրախային և համաձայնեցված կիրառման դեպքում ինտեգրացիայի օգուտները երկրների համար կարող են ընդլայնվել:

✓ Գնահատվել են ԵՏՄ անդամ երկրների դրամավարկային քաղաքականությունների առանձնահատկությունները և մարտահրավերները՝ ուսումնասիրելով ԵՏՄ մաս կազմող երկրների դրամավարկային քաղաքականության առանձնահատկությունները։ Այդ համատեքստում ուսումնասիրվել և գնահատվել է դրամավարկային քաղաքականության հոչակած ռեժիմների, նպատակների և գրանցած արդյունքների, ինչպես նաև դրամավարկային քաղաքականությունների արդյունավետության առկա խնդիրները՝ կաված ֆինանսական բացության, գնաճի զսպման քաղաքականության, փոխարժեքի քաղաքականության, կենտրոնական բանկերի անկախության, հոչակած սկզբունքների պահպանման, ինչպես նաև ազգային արժույթների հանդեպ վստահության պակասի հետ։

✓ Զուգարդելով ԵՏՄ անդամ երկրների դրամավարկային ռեժիմների փոխարժեքի քաղաքականությունների գրանցած արդյունքները դրամավարկային քաղաքականության և դրան վրա ազդող մի շարք այլ մակրոտնտեսական ցուցիչների հետ՝ գնահատվել է ԵՏՄ անդամ երկրների դրամավարկային քաղաքականությունների իրական զուգամիտումը։ Գնահատման արդյունքում հեղինակը եզրակացրել է, որ ԵՏՄ-ում դրամավարկային քաղաքականությունների զուգամիտման առկա աստիճանը առաջմ խոչընդոտում է ԵՏՄ-ում արժութային խոր ինտեգրմանը։

✓ Ուսումնասիրելով ԵՄ գրանցած փորձը դրամավարկային քաղաքականությունների համակարգման առումով և դիտարկելով դրա հնարավոր կիրառումը ԵՏՄ համար՝ ատենախոսը հանգում է այն եզրակացության, որ Եվրոպական ինտեգրացիայի անցած փորձը կարևոր հետևողություններ է տալիս թե հնարավոր լուծումների աղապտացիայի, թե գրանցված անհաջողություններից խոսափելու առումով։ Ավելի խորը ինտեգրման շրջանակներում անհրաժեշտ է հաշվի առնել մակրոտնտեսական այլ ոլորտների ներդաշնակեցումը և մոտարկումը։ Անդամ երկրների տնտեսությունների իրական կոնվերգենցիայի աճի դեպքում միայն հնարավոր կյանքի քայլեր ձեռնարկել միասնական արժույթի անցման համար։ Վերջինը միջնաժամկետ հատվածում անիրատեսական է։

✓ Որպես դրամավարկային քաղաքականությունների համակարգման ուղղված քայլ՝ առաջին հերթին անհրաժեշտ է դիտարկել ԵՏՄ պայմանագրային բազայի ամրապնդումը և կիրառումը՝ մասնավորապես արժութային և փոխարժեքի քաղաքականությունների համաձայնեցման, ազգային արժույթների փոխարկելիության և փոխադրձ գործարքներում դրանց կիրառման՝ ԵՏՄ պայմանագրում և իրավական այլ ակտերում տեղ գտած դրույթները և սկզբունքները։

✓ << դրամավարկային քաղաքականության վերլուծության շրջանակներում գնահատվել է նաև << դրամավարկային քաղաքականության մրցունակությունը Եվրապիտական տնտեսական ինտեգրման շրջանակներում և քննարկվել է ինտեգրումով պայմանավորված դրամավարկային գործիքների արդյունավետության բարձրացմանն ուղղված գործողությունների ամբողջությունը:

✓ Հաջի առնելով ԵՏՄ անդամ երկրների արտաքին առևտուի հոմքահանքային կառուցվածքը, ինչպես նաև ԵՏՄ-ում՝ ոռուական շուկայի գերիշխող դիրքը՝ արտաքին անցանկալի զարգացումների տարբեր խողովակներով իրենց բացասական ազդեցությունն են ունենում ԵՏՄ երկրների տնտեսության զարգացման վրա: << Կողմից իրականացրած դրամավարկային քաղաքականությունը դիտարկելով այս համատեքստում՝ հեղինակը եզրակացրել է, որ ուժեւ դրամի քաղաքականությունն իր բացասական հետևանքներն են ունեցել արտաքին պահուածների կրծատման վրա: Արտաքին մակրոտնտեսական զարգացումների արդյունքում նվազել են առևտրային հոսքերը ԵՏՄ շրջանակներում՝ պայմանավորված արժութային և դրամավարկային քաղաքականությունների համակարգումը և դրամավարկային իշխանությունների փոխահամաձայնեցված գործունեությունը՝ ապագա մակրոտնտեսական շուկերին դիմագրավերու միասնական մեխանիզմների և գործիքների կիրառման նպատակով:

Վերոնշյալ եզրակացությունների հիման վրա մշակվել են հետևյալ առաջարկությունները՝

1. Սուածարկում է ԵՏՄ շրջանակներում դրամավարկային քաղաքականությունների ներդաշնակեցումը զուգադրել ֆինանսական և առևտրային քաղաքականությունների համակարգման հետ: Այս առումով ուսանելի է ԵՄ փորձը, երբ հարկարյութետային քաղաքականությունների համաձայնեցման թույլ մակարդակը, ազգային մակրոտնտեսական քաղաքականությունների հանդեպ վերահսկողության ցածր աստիճանը հանգեցրել են սուվերեն պարտի ճգնաժամի:

2. Սուածարկում է քայլեր ձեռնարկել ազատականացնելու ԵՏՄ անդամ երկրների ֆինանսական շուկաները և առկա արժութային սահմանափակումները: Վերջինների վերացումով ԵՏՄ-ում դրամավարկային ինտեգրացիայի իրականացման արդյունավետությունը կաճի, այդ համատեքստում կարագանա ֆինանսական շուկաների ինտեգրումը, ինչը կարագանի արժութային ինտեգրացիայի կազմակերպումը:

3. Հարկավոր է միասնական ջանքեր գործադրել՝ ԵՏՄ շրջանակներում համաձայնեցված քայլերի միջոցով դրամավարկային անհրաժեշտ ազդակներով Հայաստանի և ԵՏՄ անդամ այլ երկրների տնտեսությունները խթանելու նպատակով՝ հիմնվելով ԵՏՄ պայմանագրային բազայի վրա: Արժութային ներդաշնակեցման նպատակով անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել՝ բարձրացնելու ազգային արժույթների օգտագործումը փոխադարձ հաշվարկներում, մասնավորապես՝ Էներգետիկ ոլորտում: Վերջինը, պայմանավորված

Հայաստանի՝ Էներգավիդրներ ներկրող Երկրի կարգավիճակով, ՀՀ տնտեսության համար էական սոցիալ-տնտեսական դրական հետևանքներ կունենա՝ հաշվի առնելով Էներգետիկ ռեսուրսների, հատկապես՝ զազի գնման գործարքներում ՌԴ ոռլուրու կիրառման օգուտները:

4. Առաջարկվում է ԵՏՄ շրջանակներում փոխադարձ հաշվարկներում աստիճանաբար անցում կատարելու ամբողջությամբ ազգային արժույթների կիրառմանը: Դա, որպես կողմնակի հետևանքը, կհանգեցնի դոլարայնացման աստիճանի կրճատմանը ԵՏՄ անդամ բոլոր Երկրներում, և զուգահեռաբար կամրացնի ազգային արժույթի դիրքերը՝ բարձրացնելով դրա հուայինությունը: Արժույթների փոխադարձ փոխարկելիությունը և գործարքներում ազգային արժույթների կիրառումը հիմք կնախապատրաստի՝ արժութային ինտեգրման հաջորդի փուլին՝ հեղինակի կողմից առաջարկված արժութային զամբյուղ ներդրման համար:

5. Որպես դրամավարկային քաղաքականության ինտեգրման հաջորդ փուլ՝ առաջարկվում է արժութային զամբյուղով հաշվարկային միավորի կիրառումը փոխադարձ անկանխիկ գործարքներում որպես միասնական արժույթի և անկախ դրամավարկային քաղաքականությունների մոտեցումների լավագույն այլընտրանքը: Այս համատեսատուում առաջարկվել է «Եվրասիական արժութային միավորի» մոդելը: Վերջինը հանդես է գալիս՝ որպես դրամավարկային և արժութային քաղաքականության արդյունավետության և կանխատեսելիության բարձրացման, մյուս կողմից՝ ապադուրայնացման և ազգային արժույթների ամրապնդման նպատակահարմար գործիք: Այս առումով մեծապես կարող է օգտակար լինել Եվրոպական արժութային միավորի՝ էքյուի փորձը: Այս դեպքում առաջարկվել է՝ որպես «Եվրասիական արժութային միավորի» փոխարժեքի հաշվարկման հիմք՝ ընդունել ՀՓԻ-ը, իսկ ազգային արժույթների կշռները հաշվարկել ԵՏՄ համախառն ՀՆԱ-ում և համախառն արտաքին առևտորում անդամ Երկրների տնտեսությունների տեսակարար կշռով:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Դիլանյան Դ.Ա., «Ֆիսկալ քաղաքականության գործիքների կողմնակի ազդեցությունը» // «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, №9-10 (181-182), 2015 թ., Երևան, 2015 թ., էջ 10-12:
2. Դիլանյան Դ.Ա., «Տարածաշրջանային ինտեգրման և մակրոտնտեսական ինտեգրման որոշ գործոնների փոխազդեցությունը» // «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, №3-4 (187-188), 2016 թ., Երևան, էջ 65-67:
3. Դիլանյան Դ.Ա., «Տնտեսական ինտեգրման սոցիալ-տնտեսական արդյունքները» // «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդես, № 1 (41), Երևան, «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսի խմբագրություն, 2016 թ., էջ 32-39:

4. Դիլանյան Դ.Ա., «Միասնական արժույթի ներմուծման հնարավորությունները Եվրասիական տնտեսական միության շրջանակներում // «Այլնտրանք» գիտական հանդես, № 1, հունվար-մարտ, Երևան, 2016 թ., էջ 100-109:
5. Դիլանյան Դ.Ա., «Եվրասիական հաշվարկային միավորի մոդելը ԵՏՄ արժույթային ինտեգրման համատեքստում» // «Այլնտրանք» գիտական հանդես, № 2, Երևան, 2016 թ., տպագրման մեջ:

ДИЛАНЯН ДАВИД АНДРАНИКОВИЧ

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ДЕНЕЖНО-КРЕДИТНОЙ ПОЛИТИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ В УСЛОВИЯХ ЕВРАЗИЙСКОЙ ЭКОНОМИЧЕСКОЙ ИНТЕГРАЦИИ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.06 – «Международная экономика».

Защита диссертации состоится 21-ого июня 2016 года, в 14⁰⁰, на заседании Специализированного совета 008 ВАК РА по экономике при Российско-Армянском (Славянском) университете по адресу: 0051, г. Ереван, ул. Овсепа Эмина 123.

РЕЗЮМЕ

Позиционирование экономической политики Республики Армения (РА) в рамках Евразийской парадигмы на сегодняшний день имеет очень важное значение.

Евразийское пространство, как часть макромира, сегодня стремится стать отдельным полюсом мировой экономики. Евразийская экономическая интеграция - объективный процесс, целью которого являются, с одной стороны - эффективного размещение ресурсов, кристаллизация региональной интеграции и создание благосостояния на этом пространстве, с другой стороны – повышение уровня конкурентноспособности Евразийского пространства в рамках международных экономических отношений.

Республика Армения является частью этого процесса и должна принять активную роль в нем, учитывая возможности интеграции, и реализовать свой потенциал экономического развития.

Принимая во внимание отсутствие комплексных научных исследований относительно членства Армении в Евразийском союзе, теоретические и прикладные исследования в этой сфере приобретают новое качество. Актуальность темы определяется следующими факторами:

- необходимостью анализа и оценки гармонизации и координации этих политик в условиях сближения денежно-кредитной политики в рамках Евразийской экономической интеграции,
- необходимостью учета международного опыта и передовой практики в денежно-кредитной политике, в том числе необходимостью изучения теоретических моделей и возможностью их внедрения,
- необходимостью критического анализа денежно-кредитной политики, с учетом таргетирования и координации текущих проблем в контексте качественного развития экономической интеграции,

- необходимостью всестороннего и систематического анализа ситуации денежно-кредитной политики РА для определении соответствующих проблем и представления предложений по их решению.

Объектом исследования является Евразийская экономическая интеграция, *предметом* же исследования – совокупность проблем денежно-кредитной политики РА в рамках Евразийской экономической интеграции, а также пути их решения.

Основной целью данного исследования является изучение путей повышения эффективности монетарной политики РА в условиях Евразийской интеграции.

Для достижения поставленной цели были поставлены следующие основные задачи:

- ✓ изучить макроэкономические эффекты международной экономической интеграции,
- ✓ изучить существующую практику координации денежно-кредитной политики стран-членов ЕС и возможность ее применения в рамках Евразийской интеграции,
- ✓ оценить характеристики денежно-кредитной политики стран-членов ЕАЭС и их возможную конвергенцию,
- ✓ выявить ключевые вопросы и проблемы при реализации интеграции денежно-кредитных политик в рамках ЕАЭС,
- ✓ определить возможности для дальнейшего расширения и развития валютной интеграции, а также пути дальнейшего углубления монетарной интеграции,
- ✓ проанализировать и оценить возможность создания валютного союза в рамках Евразийской экономической интеграции,
- ✓ изучить возможности, предлагаемые ЕАЭС, и определить вызовы денежно-кредитной политики, подходы к их преодолению в рамках евразийской экономической интеграции,
- ✓ идентифицировать сигналы денежно-кредитной политики, которые способны создавать новые возможности в контексте ЕАЭС.

На основе проведенного исследования получены теоретические и практические результаты, научная новизна которых заключается в следующем:

- ✓ выявлены и оценены фактические отклонения от объявленных целевых показателей денежно-кредитной политики государств-членов ЕАЭС и их последствия;
- ✓ в рамках валютной интеграции ЕАЭС разработан механизм оценки конвергенции денежно-кредитных политик стран-членов ЕАЭС;
- ✓ оценена конкурентоспособность денежно-кредитной политики РА с точки зрения интеграции в ЕАЭС;
- ✓ на основе опыта Европейской валютной единицы (евро) и с учетом методологии Европейского механизма валютных курсов (ERM) построена модель «Евразийской валютной единицы».

DAVIT ANDRANIK DILANYAN

THE MAIN ISSUES OF MONETARY POLICY IN THE REPUBLIC OF ARMENIA IN THE FRAMEWORK OF EURASIAN ECONOMIC INTEGRATION

The abstract of the thesis for obtaining the degree of Doctor of Economics in the speciality

08.00.06 – «International Economics»

The defense of the thesis will take place on June 21st, 2016 at 14⁰⁰ o'clock at 008 Council of Economics of SCC RA at Russian-Armenian (Slavonic) University: 123 Hovsep Emin str., Yerevan 0051.

ABSTRACT

With the membership in the Eurasian Economic Union the implementation of theoretical and practical researches in the field of the economic policy of RA gains new quality.

The Eurasian economic space, as a part of macroworld, now aspires to become a separate pole of world economy. Eurasian Economic Integration is an objective process which aims at, on one hand, the efficient allocation of resources, the crystallization of regional integration and the creation of welfare in the area, on the other hand- improving the competitiveness of the Eurasian space within the framework of international economics.

The Republic of Armenia is a part of this process and should take its active role, taking into account the possibility of integration, and implement its potential of economic development.

Particularly, it is imperative to discover existing issues of monetary policy and put efforts into finding ways of solving them taking into account the lack of comprehensive scientific researches on the topic. In terms of raising the effectiveness of monetary policy it is also crucial to consider its combination with fiscal policy tools.

The relevance of the research topic is also supported by the following factors:

- the necessity in the analysis and assessment of harmonization and coordination of monetary policies of member states in the framework of Eurasian integration;
- the necessity in considering the international experience in terms of adapting the best practice or reviewing the possibilities of synchronization;
- the necessity in analyzing the monetary policy of RA in the framework of qualitative development of economic integration taking into consideration of targeting and coordination of emerged issues;
- the necessity in comprehensive and complex analysis of the current state of the monetary policy of RA taking into account the imperative of identifying the possible challenges and recommendations for their solutions;

The object of the research is the Eurasian economic integration, and the subject of the research is the set of the issues of monetary policy of RA and the ways of their solution which is studied in the context of Eurasian integration.

The main purpose of the current research is the analysis of the ways of raising the effectiveness of the monetary policy of RA based on theoretical and empirical study.

In order to reach this goal following set of objectives are set:

- ✓ to study the macroeconomic effects of international economic integration;
- ✓ to study the existing experience in coordination of monetary policies with the example of EU and its implementation in the framework of Eurasian integration;
- ✓ to assess the monetary policy specifics of the member states of Eurasian Economic Union and the possibility of their convergence;
- ✓ to discover the opportunities and challenges of realization of monetary integration in between the Eurasiaon Economic Union member states;
- ✓ to discover the possible opportunities and ways of development of further deepening the monetary integration;
- ✓ to analyze and to assesss the possibility of establishment of monetary union in the context of Eurasian Economic Integration;
- ✓ to study the opportunities given by the EAEU and discover the challenges and the ways of solutions of the monetary policy of RA conditioned by the Eurasian economic integration;
- ✓ to discover the stimuli thata would create new opportunities in the context of EAEU;

The relevance of the research topic and its complex nature entails a compound study of the challenges and ways of solution of the issues of monetary policy of Armenia. Accordingly, the following results have been identified which contain scientific novelty:

- ✓ The factual divergence of the declared monetary policy regimes and targets of member states of EAEU was assessed and their consequences were discussed.
- ✓ A mechanism of assessment of the degree of convergence of monetary policies in EAEU member countries has been developed in the context of monetary integration of EAEU which is based on the system of monetary policy related indicators.
- ✓ A novel term of «Competitiveness of the monetary policy of RA» was suggested which was assessed in the context of Eurasian economic integration.
- ✓ Based on the experience of European Currency Unit (ECU) and taking into consideration the methodology of European Exchange Rate Mechanism (ERM) a model of «Eurasian Currency Unit» has been constructed which represents a basket of currencies with relative weights of each national currency of EAEU.



